ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով վառելիքի ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-Բ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 18.03.2019թ. ժամը 15-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Կ.Հովհաննիսյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Մկրտչյանը, Գ.Սեփոյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

1. Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով **«Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ -ի** կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերն և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը/ կցվում է/, ներկայացրեց իր կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները/գնահատման թերթիկները կցվում են/, որի հիման վրա որոշեց՝

- Հաշվի առնելով՝ որ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ -ի կողմից տրամադրված տեղեկատվությունը, ինչպես նաև առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին՝ ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել **«Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ -ին:**
- ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն հայտարարել անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
- Անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:
- «ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-Բ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագրերը կնքվելու կամ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 15:00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Կ.Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ.Մկրտչյան

_____ Գ.Սեփոյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան